կոտի մահուան առթիւ արտայայտած ցաւակցութեան համար։

Թէ՛ Ամենապատիւ Տ. Եղիշէ Սրբազան Պատրիարքի և թէ՛ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անսպասելի մահը խորին կսկիծ եւ անդարմանելի ցաւ պատճառեց մեզ բոլորիս։

Երկու սգակիր և վշտակից եղբայրական միաբանութիւններս մաղթենք և աղօթենք, որ Ս. Հոգին Աստուած մխիթարիչ և զօրավիգ լինի մեզ բոլորիս և Աստուածային ողորմութեամբ և հայ հաւատացեալ ժողովրդի խորհրդով և օգնականութեամբ յաջողուի մեզ բազմեցնել Ս. Էջմիածնի և Ս. Երուսաղէմի երկու Առաքելական Աթոռների վրայ արժանընտիր յաջորդներ, որ մեծ մխիթարութիւն կը լինի ի սփիւռս աշխարհի ցրուած հայ համայնքների։

Եղբայրական սիրոյ ողջոյններով
Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղակալ
Աղօթակից
Խորէն Արքեպիսկոպոս

Թ. 756
10 Յուլիսի 1930 ամի
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Նորին Գերաշնորհութեան
Երուսաղէմի Պատրիարքական Տեղապահ
Տ. Մեսրոպ Սրբազան Եպիսկոպոս

Ներփակ ուղարկում ենք Ձերդ Գերաշնորհութեան հանգուցեալ Հոգելոյս Հայրապետի կողմից 1925 թուի Հոկտեմբերի 22-ին հաստատուած Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու Յատուկ Կանոնագրութիւնից մի օրինակ, որպիսին ուղարկուած է Պատրիարքարանիդ 1926 թուի Մայիս 27ի Թ. 414 Հայրապետական Կոնդակի հետ։

Յայտնում ենք Ձերդ Գերաշնորհութեան, որ առաջիկայ ընտրութեան առթիւ գումարուելիք Ազգային-Եկեղեցական Ժողովը կազմակերպուելու, գումարուելու եւ ղեկավարուելու է այդ կանոնագրութեամբ, ուր համաձայն Ձերդ Գերաշնորհութեանը հովուութեանը յանձնուած ժողովուրդը (թեմը) ընտրելու է մի պատգամաւոր և Ձեր տեսչութեան ենթակայ բոլոր եպիսկոպոսները անդամ են Ազգային-Եկեղեցական Ժողովի (նաեւ միաբանութեան մի ընտր. ներկայացուցիչ)։

Շուտով հնարաւորութիւն կ'ունենանք ուղարկելու Ձերդ Գերաշնորհութեան Հայրապետական ընտրութեան հրավարտակները։ Անչափ ուրախ կը լինինք, եթէ Ձերդ Գերաշնորհութեան գլխաւորութեամբ բոլոր պատգամաւորները նշանակեալ ժամանակին ժամանեն Մայր Աթոռ։

Եղբայրական սիրոյ ողջոյններով՝
Ամենայն Հայոց Կաթողիկոսի
Տեղակալ աղօթակից և սգակից՝
Խորէն Արքեպիսկոպոս

(Պատճէն)

Հաստատեմ, 22ն Հոկտ. 1925 ամի, Ս. Էջմիածին։ [illegible] ԳԷՈՐԳ Ե. Կաթողիկոս Ամենայն Հայոց։

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՅԱՏՈՒԿ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

1. Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու Գերագոյն կանոնադիր մարմինը Ազգային-Եկեղեցական Ժողովն է։

2. Ազգային-Եկեղեցական Ժողովը գումարւում է Էջմիածնում։

3. Ազգային-Եկեղեցական Ժողովը հրաւիրում է Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսը։

4. Ազգային-Եկեղեցական Ժողովի նախագահն է Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսը։

5. Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքները ժողովի նախաթոռ անդամներն են։

6. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հիւանդութեան դէպքում, Ազգային-Եկեղեցական Ժողովին նախագահում են Սսոյ Կաթողիկոսը կամ Երուսաղէմի պատրիարքը, սոցա բացակայութեան դէպքում նախագահում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահը։

7. Ազգային-Եկեղեցական Ժողովի իրաւասութեան ենթակայ են հետեւեալ հիմնական խնդիրները.

Ա. Ընտրութիւն Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի (յետ մահուան ներկայ գահակալի).

Բ. Ընտրութիւն Ս. Էջմիածնի Գերագոյն

Հոգևոր Խորհրդի անդամների.

Գ. Հաստատութիւն Ազգային-Եկեղեցական Սահմանադրութեան.

Դ. Քննութիւն և վճռահատութիւն Եկեղեցական բարենորոգչական հարցերի.

Ե. Կարգաւորում Եկեղեցական տնտեսական վիճակի.

Զ. Վճռահատութիւն Եկեղեցուն վերաբերեալ բոլոր հարցերի։

8. Ազգային-Եկեղեցական Ժողովը ինքն է որոշում իր զբաղմունքների օրակարգը և գործունէութեան ներքին հրահանգը։

Բ.

9. Ազգային-Եկեղեցական Ժողովի անդամ են.

Ա. Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամները.

Բ. Հայոց Եկեղեցու բոլոր Առաջնորդները.

Գ. Հայոց Եկեղեցու բոլոր Եպիսկոպոսները։

Ծանօթ.— Առաջնորդի անձամբ ժողովին մասնակցիլ չկարողանալու դէպքում, մասնակցում է թեմի հոգևորականութեան ընտրեալ ներկայացուցիչը։

10. Ազգային-Եկեղեցական Ժողովի անդամ են Ս. Էջմիածնի միաբանութեան, Ս. Երուսաղէմի միաբանութեան և Կ. Պոլսոյ Խառն Ժողովի կողմից ընտրուած մի մի ներկայացուցիչներ։

11. Ազգային-Եկեղեցական Ժողովի անդամ կարող են լինել ժողովրդից ընտրուած և երեսուն տարին լրացրած իրաւասու ծխականները։

12. Իւրաքանչիւր թեմի ժողովուրդ մասնակցում է Ազգային-Եկեղեցական Ժողովին իր ընտրած մէկ կամ աւելի պատգամաւորներով։

13. Մինչև քսանևհինգ հազար ժողովուրդ ունեցող թեմը ընտրում է մի պատգամաւոր, իւրաքանչիւր թեմը ընտրում է այնքան պատգամաւոր, որքան անգամ քսանևհինգ հազար ժողովուրդ է պարունակում իր մէջ։ Վերջին 25,000ը կարող է լրիւ չը լինել, բայց ոչ պակաս տասն հազարից։

Ծանօթ. Ա.— Իւրաքանչիւր թեմ իր ընտրելի պատգամաւորների թուովընտրում է անձնափոխանորդներ, որոնք փոխարինում են պատգամաւորներին, եթէ նա որևէ պատճառով անկարող է անձամբ մասնակցիլ ժողովին։

Ծանօթ Բ.— Իւրաքանչիւր թեմ վիճակագրութեան հիման վրայ բաժանուում է չրջանների այն հաշուով, որ իւրաքանչիւր չրջան բաղկանայ քսան և հինգ հազար ժողովրդից։

14. Ազգային-Եկեղեցական Ժողովի թեմական պատգամաւորների ընտրութեան մասնակցում են հոգևորականները և քաղաքացիական չափահասութիւն ունեցող երկու սեռի իրաւասու ծխականներ։

15. Իւրաքանչիւր հազար չունչ ունեցող համայնքը ընտրում է մի պատուիրակ։

16. Պատուիրակները պատգամաւորին կարող են ընտրել իրենց միջից կամ գրսից։

17. Ազգային-Եկեղեցական պատգամաւորների, անձնափոխանորդների, պատուիրակների ընտրութիւնը Ս. Խ. Հ. Միութեան սահմաններից դուրս գտնուող թեմերում կատարւում է ըստ տեղական գործող Հայոց Կանոնադրութիւնների, սահմանադրութիւնների և կամ աւանդական կարգերի, հրահանգուելով սոյն կանոնագրութեամբ։

18. Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամաւորների ճանապարհածախսը հոգում է պատգամաւորին ընտրող թեմը, իսկ պատուիրակներինը եկեղեցիները։

19. Ազգային-Եկեղեցական Ժողովի պատգամաւորների ընտրութեան առթիւ ծագած ամենատեսակ տարակուսանքների լուծումը տալիս է Գերագոյն Հոգևոր Խորհուրդը Ս. Էջմիածնի։

20. Կարիք զգացուած դէպքում Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր Խորհուրդը տալիս է հարկաւոր բացատրութիւններ և հրահանգներ։

Գ.

21. Ամենայն Հայոց Կաթուղիկոսի մահուան դէպքում Կաթուղիկոսի ընտրութեան համար Ազգային-Եկեղեցական Ժողով հրաւիրում է Ամենայն Հայոց Կաթուղիկոսի Տեղապահը Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր Խորհրդի հետ։

22. Նոր Կաթուղիկոսի ընտրութիւնը տեղի է ունենում Կաթուղիկոսի մահուանից ոչ ուշ քան վեց ամիս յետոյ։

23. Ամենայն Հայոց Կաթուղիկոսի ընտրութիւնը կատարւում է Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, նախագահութեամբ Ա-

միեւնոյն Հայոց Կաթողիկոսի Տեղապահի։

24. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան կարգը որոշում է Ազգային-Եկեղեցական Ժողովը։

25. Այս կանոնագրութիւնը իւր ոյժի մէջ է մինչեւ առաջիկայ Ազգային-Եկեղեցական Ժողովի գումարումը։

Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամներ. Մեսրոպ Արքեպիսկոպոս, Խորէն Արքեպիսկոպոս, Բագրատ Արքեպիսկոպոս, Գարեգին Եպիսկոպոս, Գիւտ Եպիսկոպոս։

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը սոյն պատճէնի իսկութիւնը հաստատում է ստորագրութեամբ եւ Խորհրդի կնքով 3ն Յուլիսի 1930 ամի Ս. Էջմիածին։

Անդամ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի
(ԿՆԻՔ) Մատթէոս Արքեպիսկոպոս
Քարտուղար Յ. Քոչարեան

Գերաշնորհ
Տ. Մեսրոպ Եպիսկոպոսի Նշանեան
Պատրիարքական Տեղապահի եւ
Միաբանական Ուխտի Առաքելական
Աթոռոյ Ս. Երուսաղէմի

Քրիստոսաւանդ սիրոյ ողջոյն

Ձեր պատուական հեռագիրը, որով նուաստիս ներկայացուցիչ էիք կարգում Սրբազնութեանդ եւ միաբանական Ուխտի կողմից երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսի յուղարկաւորութեան ժամանակ, ստացել եմ ժամանակին։

Ինձ արած պատուի համար խնդրեմ ընդունել շնորհակալութիւնս։

Ես համեմատաբար ուշ եմ պատասխանում, որովհետեւ ցանկանում էի մի քանի նորութիւններ եւս հաղորդել, որոնց մասին Գերագոյն Հոգեւոր Խորհրդի պաշտօնական հաղորդագրութիւնը թերեւս ուշ ստանաք։

Նախ՝ աւելորդ չեմ համարում մի քանի մանրամասնութիւններ հաղորդել Վեհափառ Հայրապետի հիւանդութեան, մահուան եւ թաղման մասին, որոնք սրբազնումդ հարցդ կարող են հետաքրքրութիւն պատճառել։

Նորին Սրբութիւնը իրեն տկար է զգում Ապրիլի 16-ին. բայց չնայելով թախանձանքներին, Նորին Սրբութիւնը թէ Ծրագալոյցի երեկոյին եւ թէ Յարութեան պատարագին իջնում է Տաճար։ Յաջորդ օրը, Ապրիլի 21-ին աւելի վատ է զգում, լուծը սաստկանում է։ Անմիջապէս հրաւիրւում են հմուտ բժիշկներ, որոնք միջոցներ են ձեռք առնում լուծը կանգնեցնելու եւ սրտի գործողութիւնը կանոնաւորելու համար։ Մինչեւ Ապրիլ 28-ը Ն. Սրբութիւնը կարողանում էր վերկենալ իւր կարիքները հոգալու առանց կողմնակի օժանդակութեան, եւ իւր սովորութեան համեմատ հետաքրքրւում էր ընթացիկ գործերով։ Այդ օրն ստանում է երջանկայիշատակ Եղիշէ արքեպիսկոպոսի մահուան բօթաբեր հեռագիրը, կանչում է Գ. Խ. անդամներիս եւ մեծ վշտով եւ արտասուալից աչքերով հաղորդում է հեռագրի բովանդակութիւնը, որ մեզ եւս համակում է անհուն վշտով, քանի որ յանձին Եղիշէ Պատրիարքի մենք փայփայում էինք ապագայի հեռանկարներ, իսկ այդ հեռագիրը խորտակում էր մեր փայփայած յոյսերը։

Նորին Սրբութիւնը այդ օրից այլեւս անկարող եղաւ անկողնից վեր կենալ եւ յաճախ ասում էր մեզ. «Եղիշէ Սրբազանը գնաց ինձ համար ճանապարհ հարթելու»։

Հետզհետէ ոյժերը թուլացան եւ զգալով մօտալուտ վախճանը, Մայիսի 7-ի գիշերը կոչեց Գեր. Խոր. անդամներիս հրաժեշտ տալու եւ օրհնելու։ Թողնում եմ ձեզ պատկերացնելու այն սրտառուչ րոպէն, երբ ամենքս գիտակցելով, որ սիրեցեալ Հայրապետի կեանքի վերջին ժամերն ենք վայելում, արտասուքը կոկորդներիս յուսադրում էինք Նորան եւ մեզ, որ դեռ Նորին Սրբութեան կեանքը պէտք է հայ տառապեալ եկեղեցուն, եւ որ դեռ ինքը կապրի հմուտ բժիշկների ձեռք առած միջոցների շնորհիւ։ Ամբողջ գիշերը մենք անցկացրինք Նորին Սրբութեան անկողնու մօտ։ Մայիսի 8-ի առաւօտեան զարկերակն արդէն բաւական թոյլ էր եւ ձայնը նուաղ։ Հրաւիրուած բժիշկը յայտնեց, որ այլեւս յոյս չկայ։ Ս. Հայրապետը ժամը 10,30-ին օրհնեց բոլորիս, միաբանութեան, հայ ժողովրդին եւ աւելացրեց. «երբ հայ ազգը աւելի բախտաւոր վիճակ կունենայ, յիշեցէք, որ ես Նորա բարօրութեան համար

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Նորին Սուրբ Օծութիւն, Ազգիս Վեհափառ Հայրապետը, Տ. Տ. Խորէն Ա. Սրբազնազոյն Կաթողիկոս, ծնած է Թիֆլիս, 1873-ին։

Երկրորդական ուսմանց ընթացքը յաջողութեամբ աւարտելէ վերջ Թիֆլիսի Ներսէսեան Դպրանոցին մէջ, մի քանի տարիներ իբր ազատ ունկնդիր հետեւած է Զուիցերիական Համալսարաններու դասընթացքին։

Ուսուցչական գործունէութիւն ունեցած է Թիֆլիսի շրջանի գաւառներուն մէջ։

Վարդապետ ձեռնադրուած է 1901-ին, Սեւանի Վանահայր Սարգիս Եպիսկոպոս Փիլոյեանէ, իբրև միաբան նոյն վանքին։

Պաշտօնավարած է Նոր Պայազիտի մէջ, իբրև յաջորդ, այսինքն Առաջնորդ. կալուածներու գրաւման առեն, 1903-ին, իբրև չհամակերպող պետական տնօրինութեանց՝ աքսորուած է Ռուսաստանի Արիոլ քաղաքը։ Յետոյ, Կոմս Վարանցով փոխարքային առեն ազատուելով, վերադարձած է Նոր Պայազիտի իր պաշտօնին։

Երեւանի փոխ-թեմակալ է կարգուած՝ ժողովրդային ընտրութեան վրայ՝ 1910-ին, եւ նոյն տարւոյ Վարագայ Խաչի Բարեկենդանի Կիրակին, 19 Սեպտեմբեր, հոգելոյս Տ. Մատթէոս Իզմիրլեան Կաթողիկոսէ Եպիսկոպոս է ձեռնադրուած, իրեն օգակից ունենալով Կիլիկիոյ ներկայ Աթոռակից Կաթողիկոսը՝ Տ. Բարգէն Սրբազան. եւ Ս. Աթոռոյս ներկայ Պատրիարքը. Կ. Պոլսոյ նախկին Պատրիարք՝ Տ. Զաւէն, Տ. Մկրտիչ Ազաւնունի, Տ. Կարապետ Մազլումեան եւ ողբայեալ Տ. Դանիէլ Յակոբեան, Տ. Ստեփան Ազգարեան, Տ. Եփրեմ Սուքիասեան եւ Տ. Ամրատ Սատաէթեան Սրբազանները։

Ամերիկայի համար Հայրապետական նուիրակ կարգուելով 1920ին, հոն դացած է թեմական կարգադրութեանց համար, և նախագահած երեսփոխական այն ժողովին, որ Ամերիկայի առաջնորդ է ընտրած Տ. Տիրայր Աբգեպիսկոպոսը։

Կաթողիկոսական տեղակալ կարգուած է 1923ին, պահելով հանդերձ Երեւանի փոխ-թեմակալութեան պաշտօնը։

Երեւանէն հեռանալով, վերջնականապէս հաստատուած է Էջմիածին, իբրեւ Կաթող. Տեղակալ, նոյն առեն ստանձնելով նաև Լուսարարապետութեան պաշտօնը, յաջորդելով Տ. Գարեգին Արքեպս. Յովսէփեանի։

Հոգելոյս Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսի վախճանումէն վերջ, իբրեւ Կաթող. Տեղակալ և Գեր. Հոգեւոր Խորհուրդի նախագահող՝ անցած է ի զլուխ Մայր Աթոռոյ վարչութեան։

1932 Նոյ. 10ի Եշ. օրը Էջմիածին գումարուած Ազգ.-Եկեղեցական Ընդհ. ժողովը ձեռնարկելով կաթողիկոսական ընտրութեան, Նոյ. 12ի շաբաթ օրը վինքը կ'ընտրէ Կաթողիկոս Ամենայն Հայոց. երկրորդ օրն իսկ, կիրակի, 13 Նոյեմբեր, կը կատարուի օծումը։

Աղօթենք Բարձրեալին, որ պարգեւէ Ամենայն Հայոց Հայրապետութեան եւ Ս. Էջմիածնի անսասանութիւն եւ յաջողէ Հայաստանեայց Եկեղեցու աւանդական կարգերի համաձայն գումարել Ս. Էջմիածնում Համազգային Եկեղեցական Ժողով եւ ընտրել նոր Ընդհանրական Հայրապետ:

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութեան բարեհաճ վերաբերմունքը այս խնդրի նկատմամբ հաստատուն գրաւական է այդ հարցի բարւոք լուծման:

Ընդ սմին Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը անհրաժեշտ է համարում հաղորդել Ձեզ, որ հանգուցեալ Տ. Խորէն Ա. Կաթողիկոսը 1936 թուի Ապրիլի 18ի Հայրապետական Կոնդակով Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ Գերաշնորհ Տ. Գէորգ Արքեպիսկոպոս Չորէքչեանին կարգել է Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահ:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը ընդ սմին ներփակում է յիշեալ Կոնդակի վաւերական պատճէնը:

Տեղապահ Ամենայն Հայոց
Հայրապետութեան՝ ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊՍ. ՉԷՕՐԷՔՉԵԱՆ
Անդամ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի ԱՐՍԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
(ԿՆԻՔ)

ԽՈՐԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՍԱՆԵԼԻ ԿԱՄՕՔՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ ԱՆԴԱՄՈՑ ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ, ԼԻԱԶՕՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻՆ ՄԵՐՈՒՄ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՉՕՐԵՔՉԵԱՆ, ՀԱՐԱԶԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՈՂՋՈՅՆ ՔՐԻՍՏՈՍԱԽԱՌՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ.

Ի նկատ առեալ զփորձառութիւն Ձեր յընթացս բազմամեայ եւ պատասխանատու պաշտօնավարութեանց, նաեւ զխոհեմ, զեռանդն եւ շրջանկատ բնաւորութիւն Ձեր, այսու Հայրապետական Կոնդակաւս նշանակեմք զՁեզ Հայրապետական Տեղապահ եւ Նախագահ Գերագոյն Հոգեւոր Խորհրդոյ Ս. Էջմիածնի:

Պատուէր տամք Գերաշնորհութեանդ յետ մահուան Մերոյ, խորհրդակցութեամբ Գերագոյն Հոգեւոր Խորհրդոյ Ս. Էջմիածնի, տալ ընթացս ամենայն գործոց վերաբերելոց հաւատացեալ հօտին Մերոյ եւ Եկեղեցեաց Հայոց, որք կան ի սփիւռս աշխարհի, պահելով եւ պահպանելով անաղարտ եւ սրբութեամբ զամենայն աւանդս եւ զիրաւունս Եկեղեցւոյ, նշանակել զկանոնաւոր ընտրութիւն յաջորդին Մերոյ նորոյ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց, ըստ կարգաց եւ կանոնաց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

Լիայոյս եմք եւ հաւատամք, զի միաբանութիւնք Մայր Աթոռոյս եւ Առաջնորդք եւ Առաջնորդական փոխանորդք թեմերից, Թեմական Խորհուրդք եւ Եկեղեցական Հոգաբարձութիւնք աջակից լինին Ձերդ Գերաշնորհութեան ըստ ամենայնի մասանց ի կատար ածելով զկարգադրութիւնս Ձեր:

Աւանդեմք նաեւ եւ պատուէր տամք հայրաբար սիրելի եղբարցս եւ զաւակացս, Ամենապատիւ Պատրիարքաց, ամենայն առաջնորդաց, ազգային եւ Եկեղեցական Վարչութեանց եւ հաւատացեալ հայ ժողովրդեան, լինել զօրավիգ եւ գործակից Ձեզ, Տեղապահի

Ամենայն Հայոց Կաթուղիկոսի, միաբան եւ համերաշխ ընդ միմեանս յամենայն գործս բարիս եւ վարել զազգային-Եկեղեցական հաստատութիւնս եւ զծեռնարկս քրիստոնէականս սիրով, յուսով եւ հաւատով:

Օրհնելով զՁեզ եւ զամենեսին, մաղթեմք ի Տեառնէ շնորհել Ձեզ կար եւ զօրութիւն, Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյս անսասանութիւն եւ պայծառութիւն, Ազգիս Հայոց եւ Հայրենեացս խաղաղութիւն եւ երջանկութիւն:

Աղօթեմք առ Աստուած նաեւ վասն խաղաղութեան Աշխարհիս եւ համերաշխութեան ազգաց:

Ողջ լերուք, զօրացեալ ի Տէր եւ յաւէտ օրհնեալ ի ՄԷՆՋ, ԱՄԷՆ:

յ18-ն Ապրիլի 1936 ամի
Ըստ Տումարիս ՌՃՁԵ
Ի Հայրապետութեան Մերում Թ. ամի
յԱյրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
Ի Վաղարշապատ
Թ. 620

ԽՈՐԷՆ Ա.
Մայրագոյն Պատրիարք Կաթուղիկոս
Ամենայն Հայոց

(ԿՆԻՔ)

Դերագոյն Հոգեւոր Խորհուրդը հաստատում է սոյն Հայրապետական Կոնդակի պատճէնի նոյնութիւնը բնագրու հետ ստորագրութեամբ եւ կնքոյ դրոշմամբ: 14-ն Մայիսի 1938 թ.
Ս. Էջմիածին
Դերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ ԱՐՍԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ

Դերագոյն Հոգեւոր Խորհուրդը սոյն շրջաբերականով հրահանգում է Հայաստանեայց Եկեղեցու բոլոր Թեմական Առաջնորդներին հանգուցեալ Վեհափառ Հայրապետի օծման եւ անուանակոչութեան աւրիւ փոխանակ Հայրապետական մաղթանքի՝ կատարել հոգեհանգստեան պատարագ, իսկ Ս. Էջմիածնի տօնին եւ Նոր Տարուն կատարել մաղթանք Ամենայն Հայոց Հայրապետութեան յարատեւութեան եւ անսասանութեան համար:

Այլեւ այսուհետեւ շարունակել յիշատակել հանգուցեալ Կաթուղիկոսի անունը պատշաճ ձեւով, մինչեւ նոր Հայրապետի ընտրութիւնը:

Վերոյիշեալը հաղորդում է ի գիտութիւն եւ ի գործադրութիւն թեմիդ բոլոր եկեղեցիներին:

Անդամ Դերագոյն
Հոգեւոր Խորհրդի՝
ՎՐԹԱՆԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Թիւ 223
24-ն Մայիսի 1938 թ.
Ս. Էջմիածին
(ԿՆԻՔ)

ՌՅՂԴ

Բ. ՏԱՐԻ

ՕԳՈՍՏՈՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ
ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

1945

Հաստատեմ ի գործադրութիւն
Գէորգ Զ. Կաթողիկոս
Ամենայն Հայոց
ի 25 յունիսի 1945 ամի
ի Ս. Էջմիածին

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Գերագույն կանոնադիր մարմինը Ազգային-Եկեղեցական ժողովն է։

2. Ազգային-Եկեղեցական ժողովը գումարվում է Ս. Էջմիածնում։

3. Ազգային-Եկեղեցական ժողովը հրավիրում է Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք Կաթողիկոսը։

4. Ազգային-Եկեղեցական ժողովի նախագահն է Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք Կաթողիկոսը։

5. Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Երուսաղեմի և Կ. Պոլսո Պատրիարքները ժողովի նախաթոռ անդամներն են։

6. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հիվանդության դեպքում Ազգային-Եկեղեցական ժողովին նախագահում են Տանն Կիլիկիո Կաթողիկոսը, Երուսաղեմի և կամ Կ. Պոլսո Պատրիարքը։ Սոցա բացակայության դեպքում նախագահում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղապահը կաթողիկոսական համաձայնությամբ։

7. Ազգային-Եկեղեցական ժողովի իրավասությանն ենթակա են հետևյալ հիմնական խնդիրները.

Ա) Ընտրություն Ամենայն Հայոց Մայրագույն Պատրիարք-Կաթողիկոսի.

Բ) Ընտրություն Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների.

Գ) Հաստատություն Ազգային-Եկեղեցական Սահմանադրության։

Դ) Քննություն և վճռահատություն եկեղեցական և այլ կանոնական և ընդհանուր հարցերի.

Ե) Կարգավորում եկեղեցական տնտեսական վիճակի։

8. Ազգային-Եկեղեցական ժողովը որոշում է իր գրաղմունքների օրակարգը և գործունեության ներքին հրահանգը.

9. Ազգային-Եկեղեցական ժողովի անդամ են՝

(Ա) Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները.

Բ) Տանն Կիլիկիո Կաթողիկոսն իր եպիսկոպոսներով և Երուսաղեմի ու Կ. Պոլսի պատրիարքները։

Գ) Հայոց եկեղեցու բոլոր առաջնորդները։

Դ) Հայոց եկեղեցու բոլոր եպիսկոպոսները։

Ծանոթություն. — Առաջնորդի անձամբ ժողովին մասնակցել չկարողանալու դեպքում մասնակցում է թեմի հոգևորականության ընտրյալ հոգևորական ներկայացուցիչը։

10. Ազգային-եկեղեցական ժողովի անդամ են Ս. Էջմիածնի, Տանն Կիլիկիո, Ս. Երուսաղեմի միաբանության, Կ. Պոլսի պատրիարքության մի-մի ներկայացուցիչները։

11. Ազգային-Եկեղեցական ժողովի անդամ կարող են լինել ժողովրդից ընտրված երեսուն տարին լրացած իրավասու ծխականները։

12. Յուրաքանչյուր թեմի ժողովուրդ մասնակցում է Ազգային-Եկեղեցական ժողովին իր ընտրած մեկ կամ ավելի պատգամավորներով։

13. Մինչև քսան և հինգ հազար ժողովուրդ ունեցող թեմը ընտրում է մեկ պատգամավոր, յուրաքանչյուր թեմ ընտրում է այնքան պատգամավոր, որքան անգամ քսան և հինգ հազար ժողովուրդ է պարունակում իր մեջ։

Վերջին 25.000-ը կարող է լրիվ չլինել, բայց ոչ պակաս 10.000-ից։

Մանրություն.— Ա. Յուրաքանչյուր թեմ իր ընտրելի պատգամավորների թվով ընտրում է անձնափոխանորդներ, որոնք փոխարինում են պատգամավորին, եթե նա որևէ պատճառով անկարող է անձամբ մասնակցել ժողովի։

Մանրություն.—Բ. Յուրաքանչյուր թեմ վիճակագրության հիման վրա բաժանվում է շրջանների այն հաշվով, որ յուրաքանչյուր շրջան բաղկանա քսան և հինգ հազար ժողովրդից։

14. Ազգային — Եկեղեցական ժողովի թեմական պատգամավորների ընտրության մասնակցում են հոգևորականների և քաղաքացիական չափահասություն ունեցող աշխարհական իրավասու ծխականները։

15. Յուրաքանչյուր հազար շունչ ունեցող համայնքը ընտրում է մի պատվիրակ։

Մանրություն.—Փոքր համայնքները ըստ հարմարության միացվում են պատվիրակ ընտրելու համար։

16. Պատվիրակները պատգամավորին կարող են ընտրել իրենց միջից կամ դրսից։

17. Ազգային—Եկեղեցական պատգամավորների, անձնափոխանորդների, պատվիրակների ընտրությունը ՍՍՌ Միության սահմաններից դուրս գտնված թեմերում կատարվում է ըստ տեղական գործող Հայոց կանոնադրությունների, սահմանադրությունների և կամ ավանդական կարգերի, հրահանգվելով սույն կանոնադրությամբ։

18. Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավորների ընտրության մասին ծագած ամենատեսակ տարակուսանքները լուծումը տալիս է Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը։

19. Կարիք եղած դեպքում Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը տալիս է հարկավոր բացատրություններ և հանգներ, իսկ Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, Երուսաղեմի և Կ. Պոլսո Պատրիարքությունները վճռում են իրենց ներքին կանոնադրության համաձայն։

20. Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահվան դեպքում կաթողիկոսի ընտրության համար Ազգային-Եկեղեցական ժողովը հրավիրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահը Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհրդի հետ։

21. Նոր կաթողիկոսի ընտրությունը տեղի է ունենում կաթողիկոսի մահվանից ոչ ուշ քան վեց ամիս հետո։

22. Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրությունը կատարվում է Ս. Էջմիածնի Տաճարում սույն կանոնադրության համաձայն։

23. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության կարգը որոշում է Ազգային-Եկեղեցական ժողովը։

Սույն կանոնադրությունն ընդունվեց և հաստատվեց է 1945 թ. հունիսի 19-ին տեղի ունեցած Ազգային-Եկեղեցական ժողովի երրորդ նիստում։

ԴԻՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ—
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՈ

Doc. 3

Մենք ևս, սիրելի՛ արքազան հայրեր, այս պահուս, երբ ի մի խմբված ենք մեր պաշտոնին պարտականությանց կատարման համար, և մեր հանգուցյալ Հայրապետին քաղցր հիշատակին հարգանք կմատուցանենք, միաժամանակ աղոթել պարտինք ի սրտե և մաղթել՝ որ հրեշտակներու բերնով երկինքեն եկած պատգամը՝ «Երկիր խաղաղություն և ի մարդիկ հաճություն» իրագործվի մեր այս տագնապալի ժամանակներում, աշխարհի բոլոր մեծ ու փոքր ազգերու մեջ, ի փառս Աստուծո և երջանկություն և ի բարօրություն համայն մարդկության:

Աղոթենք և գործենք այս մտադրությամբ, և թող աղոթե բոլոր ազգերու հետ նաև հայ ժողովուրդը, որ Տեր այցելե իր տառապյալներուն և փրկե զանոնք միջազգային ատելության և պատերազմի մահափյուռ զենքերու չարիքներեն. ամեն»:

Ժողովը, քննելով ներկայացված խնդիրները, հաստատեց հետևյալ օրակարգը.

1. Ի Տեր հանգուցյալ Վեհափառ Հայրապետի կտակ-կոնդակը ամենապատիվ Տ. Տեղակալի մասին.
2. Գերագույն Հոգևոր Խորհուրդի անդամներու կազմը լրացնելու մասին.
3. Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցվո միասնականության հետագա ամրապնդման մասին:

1. Ի Տեր հանգուցյալ Վեհափառ Հայրապետը 1954-ի ապրիլ 30-ի սրբատառ կոնդակով Տեղակալ կնշանակեր Երուսաղեմի Պատրիարքության Տեղապահ գերաշնորհ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանը: Եղիշե սրբազան Գերագույն Հոգևոր Խորհուրդին ուղղած հեռագրով կիմացներ, թե հազիվ հունիսի 10-ին կրնար Բոմբեյեն Երուսաղեմ մեկնիլ:

Նկատելով, որ իր Մայր Աթոռ ժամանումը կրնա ուշանալ, ժողովը տվավ հետևյալ որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ

ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ 1954 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 5-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏԻ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

1. Երջանկահիշատակ Տ. Տ. Գևորգ Զ. Հայրապետի կամքը Կաթողիկոսական Տեղապահ նշանակելու Երուսաղեմի Պատրիարքական Տեղապահ ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանին, որն արտահայտված է Նրա սույն թվականի ապրիլի 30-ին գրած սրբատառ կոնդակում, սուրբ է մեզ համար: Մենք սպասում ենք, որ Եղիշե սրբազանը բարեհաճի գալ Էջմիածին և անցնել իր պարտականությունների կատարմանը:

2. Սակայն, ի նկատի ունենալով, որ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանի ժամանումն ուշանում է, իսկ Մայր Աթոռի աշխատանքներն անհրաժեշտ է անխափան շարունակել, ուստի և անհրաժեշտ ենք համարում Մայր Աթոռի և Կաթողիկոսության գործերի կառավարումը հանձնել Ս. Էջմիածնի միաբանության ավագագույն անդամ և Գերագույն Հոգևոր Խորհրդի նախագահող գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսին, մինչև Եղիշե սրբազանի ժամանումը:

3. Ելնելով հանգուցյալ Վեհափառ Հայրապետի կամքից, անհրաժեշտ ենք համարում նշել, որ ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տեր-

տերյանը Տեղակալի պարտականությունների մեջ կարող է մտնել Մայր Աթոռ Ս. Էջմիածին տեղափոխվելուց հետո միայն:

2. Գերագույն Հոգևոր Խորհուրդի կազմը ամբողջացնելու հարց:

Նկատելով, որ Գերագույն Հոգևոր Խորհուրդի անդամներեն ոմանք վախճանած են և այժմ Գերագույն Հոգևոր Խորհուրդի վրա ծանր պարտականություններ կիյնան մինչև Տեղակալի ժամանումը, ինչպես նաև անոր օգնելու և կազմակերպելու ազգային-եկեղեցական ժողովի գումարումը, կատարելով նաև Վեհափառ Հայրապետի կամքը, ժողովը որոշեց լրացնել ժամանակավորապես Գերագույն Հոգևոր Խորհուրդի ներկա կազմը հետևյալ երեք անդամներով.

Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյան,
Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյան,
Պ. Մարտիրոս Տեր-Ստեփանյան (հայրենադարձ մտավորական):

3. Հայաստանյայց Առաքելական եկեղեցվո միասնականության ամրապնդման հարց:

Նկատելով, որ Հայոց եկեղեցին մի է իր նվիրապետական բոլոր Աթոռներով և նկատելով, որ միության և փոխադարձ սիրո մեջ կկայանա մասնավորաբար Մայրենի Ս. եկեղեցվո պայծառացումն ու զորացումը, և նկատելով, որ դարերու ընթացքին ինչպես և այժմ նախամեծար Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հանդիսացած է և կհանդիսանա բովանդակ Հայ եկեղեցվո գոյության պատվանդանը, ժողովականք, ազգային սուրբ այս օրերուն, որոշեցին կոչ բանաձևել, հիմք ունենալով Գերագույն Հոգևոր Խորհուրդի ներկայացուցած ստվերագիրը և ներկայացնել ժողովի հաջորդ նիստին, որ տեղի պիտի ունենա հունիսի 7-ի առավոտյան ժամը 10-ին: Կոչ-ստվերագրի պատրաստությունը հանձնվեցավ Տիրան, Դերենիկ սրբազաններու և Պ. Մինաս Մինասյանի, նախագահությամբ Տ. Խաչ սրբազանի:

Ժողովը փակվեցավ կեսօրվա ժամը 4-ին:

Բ. ՆԻՍՏ

Ի 7-Ն ՀՈՒՆԻՍԻ 1954 ԱՄԻ

Տեղի ունեցավ Վենետիկի դահլիճին մեջ երկուշաբթի կեսօրեն առաջ ժամը 11-ին, նախագահությամբ գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանյանի:

Կարդացվեցավ նախորդ նիստի արձանագրությունը և վավերացվեցավ:

Այնուհետև ներկայացվեցավ հանձնաժողովի պատրաստած կոչ-ստվերագիրը և պարբերություն առ պարբերություն քննելե և որոշ ուղղումներ կատարելե վերջ, հաստատվեցավ ժողովականներու կողմե:

Ժողովը փակվեցավ ժամը 2-ին նախագահ սրբազանի հոգեհանգստյան աղոթքով և պահպանիչով:

(Ստորագրություններ)

ՎԱՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ
ՀԱՅԿԱԶՈՒՆ ՎԱՐԻԱՊԵՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՇԱՎԱՐՇ ՎԱՐԻԱՊԵՏ ԴՈՒՅՈՒՄՃՅԱՆ
ՎԱՐԴԱՆ Ծ. ՎԱՐԴ ՏԵՐ-ՍԱՀԱԿՅԱՆ
ՍՏԵՓԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ
ՄԻՆԱՍ ՄԻՆԱՍՅԱՆ
ԽԱՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆ
ՄԱՄԲՐԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՖԱՅԱՆ
ՍԱՀԱԿ ԵՊԻՍԿ. ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԴԵՐԵՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՓՈՂԱՏՅԱՆ
ՎԱԶԳԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼՃՅԱՆ
ՍԻՄՈՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ՏԻՐԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍՈՅԱՆ